№ 176 Հոկտեմբերի 4 (16) 1880 Հոկտեմբերի 4 (16) № 176

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ։

Ստարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“.

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մայրենի լեզուի ուսում։—Ներքին տեսութիւն։ Նամակ Դանձակից։ Ներքին ուրիշ։—Արտաքին տեսութիւն։ Արևելեան գործեր։ Նամակ Պարսկաստանից։—«Մշակի» հեռագիրներ — Ցայտարարութիւններ։ — Բառարան։ Քաղուածք մի ձեռագիր յիշատակարանից։

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՄԸ

—

«Մշակի» հրատարակման առաջին տարուց սկսած մենք միշտ այն միտք էինք յայտնում որ մայրենի լեզուի ուսումնասիրութիւնը ոչ թէ միայն անհրաժեշտ է որպէս յատկանիշ այն ազգութեան, որի սեփականութիւն է յիշեալ մայրենի լեզուն, բայց որ մանուկը կարող է հասնել կանոնաւոր մտաւոր զարգացման աստիճանին միայն մայրենի լեզուով տարբերակ ուսմունքներ ընդունելով, որովհետև մայրենի լեզուն հեռանք լինելով մանուկի ցեղական, ֆիզիոլոգիական կազմուածքի, ինչ կրօնի և պատկանէր այդ մանուկը, աւելի է յարմարվում նրա ուղեղի կազմակերպութեանը, ուրեմն աւելի էլ նպաստում է այդ ուղղի կանոնաւոր, բնական գործակատարութեանը, նրա ֆիզիոլոգիական կանոնաւոր զարգացմանը, քան թէ մի օտար լեզու։ Մայրենի լեզուով աւանդած միտքը աւելի ըմբռնելի է երեխայի ուղեղին, աւելի հասկանալի է նրան, աւելի նպաստում է նրա մտաւոր կանոնաւոր զարգացմանը, քան թէ օտար մի լեզուով արտայայտած նոյն միտքը։ Իսկ մանկավարժութեան նպատակը ի՞նչ է, եթէ ոչ ամեն ջանք գործ դնել կանոնաւոր, բնական կերպով զարգացնել մանուկի ուղեղը, որպէս զի նա աւելի ընդունակ դառնայ, աւելի պիտանի դառնայ թէ իր անձի, թէ իր ազգի և թէ ամբողջ պետութեան համար։ Մեր նպատակը պէտք է լինի պատրաստել ընդունակ, զարգացած, պիտանի, օգտակար քաղաքացիներ։ Որքան հայը կամ վրացին կը զարգանան որպէս հայեր և վրացիներ, այսինքն կը զարգանան մանկավարժական կէտից կանոնաւոր, բնական կերպով, այնքան նրանց ուղեղը կը մշակվի, նրանք աւելի կատարեալ մարդիկ կը լինեն, ուրեմն և աւելի պիտանի քաղաքացիներ կը լինեն ամբողջ պետութեան։

Մայրենի լեզուի ուսումնասիրութեան վրա ուշադրութիւն դարձնելը մենք մեզ համար նպատակ էինք դրել թէ «Մշակի» ինն տարվայ գործունէութեան մէջ, թէ Ներսիսեան դպրոցի հոգաբարձու եղած ժամանակ, առաջարկած լինելով պատրաստական դասատան համար մի ծրագիր, որ ամբողջութեամբ հիմնվում էր մայրենի լեզուի ուսումնասիրութեան սկզբունքի վրա, վերջապէս նոյն միտքը մենք պաշտպանեցինք և Դումայի մէջ, երբ ձայնաւոր եղած ժամանակ մեզ ասողվեցաւ առաջարկութիւն անել որ Թիֆլիսի արուեստագործական դպրոցի մէջ հիմնվեն երեք զուգընթաց դասատներ՝ մինը ռուսերէն, միւսը հայերէն, երրորդը վրացերէն լեզուով։

Այն ժամանակ Դումայի միաձայն ընդունեց մեր առաջարկութիւնը և այս այժմ մայրենի լեզուի միջոցով առարկաների աւանդելը իրագործված ենք տեսնում Թիֆլիսում այս օրերս հիմնված Միքայէլեան արուեստագործական դպրոցին հետ միացած բաղաքային ուսումնարանի մէջ։

ԲԱՆԱՍԻՐ ԱԿԱՆ

ԳԱՂՈՒԱԾՔ ՍԻ ՁԵՌԱԳԻՐ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

Ա.

«Մարս ինձ աշխարհ է բերել մի գիւղի անկիւնում։ Հայրս, Վերին Բասենցի, 1823-ի հատուած եկողներէն է։ Մեր տան տանէրէն գրուած կալուածագրերէն հինը 110 տարուան է, և բոլոր գրերն սատ են թէ մեր պապերը յիշեալ գաւառում կալուածք ունեցել և հողավատակ մարդիկ են եղել։ Մի գերդաստանական աւանդութիւն մեր տոհմի բունը Թորդումում է գնում, և ասում է թէ մեր նախամամը, որմէ այնդին այլ յիշատակ չը կայ, յոն է եղել։ Թէ նա քանի մի որդի է ունեցել, և հարստա կալուածքներ։ Թէ տանիկ իշխաններն առաջարկել են նոցա յանձն առնուլ կամ հաւատները փոխել կամ կալուածներէն զրկուիլ։ Թէ այդ կէնը, տեսնելով որ մեծ որդիները մերժեցին հաւատուրացութիւնը, դիմում է փոքրին՝ աղաչելով որ յանձն առնու և չը զրկուի ոնքան կալուածներէ։ սա ես մերժում է։ Աւանդութիւնը չի յիշում թէ երբ է եղել այդ, և թէ այնուհետև երբ մեր տունը գաղթական է եկել Վերին Բասենս։ Բայց մի կողմ տուգարութիւնը։ Այդքանն էլ որ արի, նպատակս ուրիշ էր։ Մի փոքր գերդաստանի մէջ երբեմն մի ամբողջ ազգի պատկեր կարելի է լինում տեսնել։ Ստարամուտ և բռնաւոր իշխաններու բացարձակ կամքին ձեռք խաղալիք մատնուած տէրութիւնէ յաստակ և հպատակութիւնէ ծառայ ենք եղել գարձած, և այդ վիճակին մէջ ես աւելին այն է որ, թողնելով մեզ վրդոներուն մեր քրտնքի արդիւնքը, ինքներս չարկուած ենք եղել վտարական գնալ ամենուրեք որ ինչ է փրկենք ամեն ինչ եղծող ազդեցութիւնէն մեր հաւատքը գոնէ և մեր յոյսը։ Անտառի անասունին կամ երկրի թռչունին նման մեզ տեղէ տեղ հալածել, մեզ դիւադարձ են արել այդ անողորմ որսորդները։

«Իմ մատաղ մանկութեանս մէջ, հօրս յարկի տակ՝ մայրս է առաջին անգամ շրթունքս վարժեցուցել հայ այբուբենի սրբազան տառերը հնչելու։ Ո՞վ տղայութեանս ամենաքաղցր և ամենաանմեղ իշխատակներ։ Զմեռ էր.— մօրս մատներով կարուած սիրունիկ շապկի մէջ անցուցած քերեկան ձեռքս գնում նստում ի՛ի իմ Սարտար կամ իմ Նապլի անուն եղեներու մարքի մէջ, կամ եթէ պառկած էինք նոցա կուրծքին մօտիկ, կռնակս իրենց ձմեռուայ փափկացած ու գեղամեղ տաքուկ կաշուն դէմ արած, իրենց ալտրժելի փնչիւնի տակ հընչում էի— այր, բեն, գեմ, կամ այր, ժ, ճ, ռա, կամ վանկում էի բեն, այր՝ բա, կամ կապում էի— բեն, այր՝ բա, գեմ ինի՝ գին, բանգին, բեն, այր՝ բա, գա է գէ, բանգէ։ Գարնէն էր.— գամերը դատարկ էին, Սարտարն ու Նապլին իրենց ընկերներով գնացել էին՝ այրով դաշտ պատուելու, արտեր ցանելու, մարգերը հաւերուն թողնելով. այդ ժամանակ էլ ես սիրում էի դոմը, որովհետև սիրում էի գոմերս, որովհ բոլորն էլ իրենց յատուկ անունն ունէին։ Երբ դարձան շէկ արևիկը գողի պէս երդքէն ներս էր սահում մի բարակ սիւնով, և պատի հետ կամացուկ վայր էր իջնում գոմի մէջ տեղը, ներս էինք վազում ես ու դաս ընկերներս, ագիլի ու տղայ խառն, մի փոքրիկ մատաղերամ, և նրա շուրջը բոլորուած՝ ձայն ձայնի տուած կարգալով եղանակում էինք, որքա քերեկան, որքա փոքր սաղմոս. երբ դասերս սերտ էինք, արևիկի հետ էինք սկսում իջանել, կամ պաշտոնի էինք խաղում, կամ մանաւանդ աղաների, ներու ելեկը տեսնելով, ելեմաւոր դիտելով զուարճանում։ Այդ անմոռանալի օրերը իրենց բիւրազան զրաւմունքներով ու զբօսանքներով քեզ մանր պատմելը երկայն կը լինի։ Զորս՝ հինգ ամիս մեր ուսումն ընդհատվում էր գառներ արածելու, որ մանուկներու յատուկ գործն է՝ դեռաբուսիկ ցօղաթաւում դալարիներու մէջ, քաղի ու կաղի կոիր ժամանակներ են. շայժուն և եռ. եկող կեանքը արձակ օդումն է, զաւեռումն է, բլրներու վրա է, կանաչումն է։

«Յօ՛ներորդ տարիս մինչև տասներեքդ՝ մայրս է ինձ ուսուցել այդ կերպով. նա ինձ ուսուց նաև գրիչ բռնելը. իւր ձեռքի տակ կայացի քերեկան, պզտի սաղմոս, մեծ սաղմոս։ Ախ, նա ինձ սովորեցուց, ինչպէս մոռանամ, «ՄրաՌնալ է այր, որ ոչ գնաց ի խորհուրդս ամարչտաց. ի ճանապարհի մեղաւորաց նա ոչ եկաց, և յաթոռս ժանտից նա ոչ նստաւ»։ Երբ սկսում էինք փոքր սաղմոսն արձակ կարդալ, առանց կապելու, և հասնում էինք «Իշխեսցուք զկապանս նոցա, և մեկնեսցուք ի մէնջ զլուծ նոցա», մի մեծ տօն էր. տօն էր, բարեկամ. մի մեծ տօն էր։ Կապանքները կոբրտոց աշակերտը բացուրեին սահանով խեծաղ կը բերէր վարժապետուհուն. ապնիս բիշիշը, կամ երբեմն մեզը, կամ ելբեմն ռուփ՝ խեծաղի ճաշակը աւելի անուշ նում էին. ամեն մէկիս բաժին էր հանվում։ Ուստի մեզ այդ զապկնական սովորութիւնը. ինչու այդ խօսքին հասած անպատճառ կատարում էինք այն մանկական տօնը։ Ցաղկերտի թէ Բուռաքի, Լէնկեմեանի թէ մի ուրիշ բռնաւորի օրերէն մնած էր այդ սովորութիւնը, որ խոշեմութիւնը մանուկներով սկսել տուել ու մանուկներով պաշպանում էր։

Բ.

«Մի աշունք, իմ տեսածներէս տասնեմէկերորդը, մի երկայն ճանապարհի վրա էինք՝ մայրս և ես, նա ձիու վրա էր, իմ հեծածս էր մի խոշոր և լաւ գնացիկ ուսակ. նաև մի ուրեկից առաջնորդ, աղգականներէս մէկը. և նա հետի էր։ Արեւ տաքացնում էր մեր կռնակը. լուռ էր ճանապարհը. ուրիշ ընկեր չունէինք, բայց եթէ մեր տուտրները՝ որ մեզնէ սառաջ էին գնում։ Այդ խորին լռութիւնն մէջ մի չոր ձայն, որ թեթև բայց անգաղար լսվում էր ծեծուած զեմնի վրա, այն՝ մեր անդրուպարներու ոտի դոփիւնն էր, և երբեմն նա՛, նոցա փռնչիւնը սթափեցնում էր մեզ այն մի տեսակ թմբութիւնէն, ուր մարդ ոչ քնում է՝ ոչ մտածում է, և ոչ, համարձակում եմ ասել, լսում է. բայց եթէ մի մեքենայաբար լսել, ուր ըմբռնում՝ կամ միտքը բնաւ գործակցութիւն չունեն։ Ոչ, մեր երկրի կեանքի ընդհատողն նեկարն էր դանդաղում և մեքենայաբար շարժուն. կարծես մարդը՝ ապրելէն ձանձրացած, մի տեսակ թմբութեան մէջ ապասում էր թէ երբ կը հասնի աչքը փակելու բոպէն։ Եթէ մի ցնցում մեզ չը սթափեցնէր, դեռ այսօր էլ մի և նոյն թմբութեան մէջ կը լինէինք։— Այդ կախարդական լռութիւնն ծոցում ի՛ր բեմն զարթնում էր իմ մանկական երևակայութիւնս. սրտաղող կարդում էի թէ հիմա մի ժայռի ետևէ, սի փլի տակէ մի ձորի մէջէ կելնեն ձիաւորներ։ Մեր ճանապարհներու տարիական արկածքը, որ երկայն ժամերու միօրինակութիւնը երբեմն կտրում է, աւազակներէ կողոպտուիլն է կամ հաւի նման անձայն մորթուիլը։ Երկիւղս աւելի տեղէք ունէր, վասն զի թիւրքի հողի վրա էինք։ Երբ հեռուէն տեսնում էի ճանապարհի վրա որ և է գիւղի ծերի ծոյլ ծոյլ, ոլոր մոլոր բարձ անալը, երևակայութիւնս էլ հետն էր բարձրանում. երբ անցնում էինք գիւղի միջով, հոյի լինէր թէ թիւրքի, և տեսնում էի այն ինձ օտար օտար դէմքերը փափախի կամ փակեղի տակ, որ տանիքներու վրա կանգնած լայն աչքերով մեզ էին նայում, ասում էի ներքինս, գիւղէն հեռացանք թէ՝ գուցէ այս գուռ պինդ մարդիկը մի հեծնեն և Հզան մեր հետեն, վայ մեզ այն ժամանակ։

«Սեր առաջին օթեվանը մի հայ գիւղ եղաւ։ Նստ տարի փոքր, և շատ ժամանակ չէ, պատահեցաւ ինձ նոյն գիւղը կրկին տեսնել բայց այնտեղ չը գտայ հինգտարեայ բնակիչները։ Ինձ պատմեցին ոչ նոքա, արտասուքն աչքերում կրակը սրբտերում, ակամայ թողնելով իրենց պապերու և Ջիրմ սիրելիներու գերեզմանները, իրենց հայաւէտ գաղտերը, եկել քաշուել են այն բեռան կողքը, ուր տանիկ զօրավարն յոգեցեց և յաղթեաւ. այն հսկայ գերեզմանի վրա պիտի բնակութիւն դնեն։ Նոցա փոխանակ տեսայ վայրան աղջկանց ու կանանց և նոցա սաղրու լոզանցը Թագրատունեաց ջրերու մէջ։ Որտեղից ուր։

«Բայց դեռ չատացի թէ ուր էինք գնում։ Դէպի Տաճկա-Հայոց մայր Կրմա քաղաքը։ Մայրս այնտեղ պիտի տեսնէր իր եղբայրներն ու ազգականները. նա՝ ով գիտէ ինչ պիտի անեի. պիտի ուսանէի. ինչ և իցէ, մօրս հետն էի, և որովհետև դեռ փոքր էի, իրաւունք ունէի միայն իր հետը լինել։ Մի այլ օր մենք օթեվանեցինք մի քրդի գիւղ՝ Դիմամբ ինչ էինք՝ աղայի տունը։ Մեծ սիրով հիւրընկալեցին մեզ և մեծարեցին։ Ինչպէս սիրուն շինուած էր նոցա գոմի սենեակը. երկայնադիր, պատերը շիտակ ու բարձր և ապիտակ. առաստաղը՝ երկայնութեան վրա գոգաւոր. Սողանդուի մայր փայտի ասեղ, բարեշէն և երկարաչափակ տախտակներէն յօրինուած. սենեակի մէկ ճակատը և միւսը բարձրերում նոյնպէս տախտակեամբ գոգաւորաց զարդարուած էին, իսկ այլ և այլ զարդերով փարուած. սիրուն ու սրբատաղ շինուած էր նաև վառարանը օճախը, ուր հիւրերու համար ցտիսի ու խոհերու կրակը մարի անուշ փայլիւնում էր, և մարի ճարճատելով բալաբոց էր։

Ռուսաց «Կովկաս» լրագիրը թէև ընդդէմ չէ այդ մանկավարժական սկզբունքին, բայց ասում է, որ հարկաւոր էր այդ սկզբունքը կատարելապէս իրագործելու համար մոցնել դպրոցի մէջ ոչ թէ միայն երեք գլխաւոր տիրապետող լեզուները, այլ Կովկասում և Անդրկովկասում եղած բոլոր մանր մանր լեզուները, կամ եթէ չէ կարելի, պահպանել միայն ռուսաց լեզուն: Այս օսերէն կամ աւարերէն լեզուներով չէ կարելի աւանդել ոչինչ առարկաներ, որովհետև այդ լեզուները չունեն ոչ անցեալ, ոչ գրականութիւն, ոչ տառեր, ոչ կլասիկային լեզու հայերէնի և վրացերէնի պէս, երկրորդ՝ այնու ամենայնիւ մանկավարժական ծիրդ սկզբունքին աւելի յարմար է որ մոցրած են երեք լեզուները, և աւելի հեռու կը լինէինք մանկավարժական ժամանակակից պահանջներից, եթէ մոցնէինք միմիայն մի լեզու: Եթէ չենք կարող հազար և մի լեզու մոցնել, աւելի լաւ է որ երեք տիրապետողներն ենք մոցրել, քան թէ եթէ միայն մինը մոցնէինք....

Ուշադրութիւն ենք դարձնում մի և նոյն ժամանակ «Կովկաս» լրագրի № 262 մէջ տպված Կովկասեան ուսումնարանական հոգաբարձու պ. Լանսօվկու շրջաբերականի վրա, որի մէջ նա յայտնում է այն միտքը, որ մայրենի լեզուն ոչ թէ միայն տեղացիներին անհրաժեշտ է, բայց և Կովկասեան ռուս երեխաները, մանաւանդ պաշտօնեաների զաւակները, որոնք իրանց սուրբումի են ադմինիստրացիայի, պոլեցիայի կամ դատարանների մէջ ծառայելուն, պէտք է տեղական լեզուներից մինը սովորեն: Այդ նշանաւոր շրջաբերականը մենք կաշխատենք արտատպել «Մշակի» մէջ:

Եւ Կովկասը ու Անդրկովկասը գիտական կէտից ուսումնասիրելու համար անհրաժեշտ կը լինէր որ ռուսները ուսումնասիրէին տեղական լեզուները: Այդ մասին յոյս ունենք դարձեալ խօսելու:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԴԱՆԶԱԿԻՑ

—

22 սեպտեմբերի

«Մշակ» լրագրի 131 համարում, Դանձակ քաղաքում անցեալ տարվանից հիմնված ցորենի կոմիտեի հաշուետուութեան վերաբերմամբ, տպագրված Նամակս փոքր աղմուկ չը բարձրացրեց. ամենի մի քաղաքախում պատահում էին անձինք կամ ուրախ-ծալոը երեսին հաստակոմեան անմեղ անդամներից և կամ յանքերը կիրած, կնճռոտ ճակատով ցորենի կոմիտեի անդամներից. պատմում էին միմեանց Նամակիս բովանդակութիւնը և ամեն մէկի բերանից լսում էր. «ՀԷՏ, լսով կարդացիք, ղէՏ, ապասնք, եթէ կոմիտեը կամովին հաշիւ չը տայ, մենք կը պահանջենք...» Բայց ցաւելով պէտք է ասեմ, որ Դանձակում ամենայն ինչ բոլոր է, վառվում է, քանի որ կրակը մոտցնում ես, էնեց կրակը հեռացրիր թէ չէ, հանգաւ, սառաւ ամենայն ինչ: Այսպէս էլ պատահեց իմ Նամակիս հետ. նոր կարդալիս վառվում, ոգեորվում և պատրաստվում էին հաշիւ պահանջել կոմիտեից, էնեց որ անցաւ մի քանի ժամանակ, ամենայն բան մոռացվից, դարձեալ ընկան խորը թմբութեան մէջ: Մեր պատուելի կոմիտեի անդամներն էլ, տեսնելով, որ հաստակոմիտիան մոռացաւ, ոչ թէ կամենան շտապով պատրաստել հաշիւները և հաստակոմիտեան հետաքրքրութիւնը բաւականացնել, այլ ընդհակառակն, սկսեցին օրոնել Նամակագրին, մէկ քանիներին սպառնալիքներ կարդալ, որից զրեթէ զարհուրած մեր քաղաքային բժիշկ պ. Համատիւռը իր ստատուս Նամակով «Մշակի» 15։ համարում յայտնեց, որ Նամակի հեղինակը ինքը չէ:

Ես հաւատացնում եմ կոմիտեի պ. պ. անդամներին, որ Նրանց հետ ոչինչ անձնական հաշիւ չունեմ, խոստովանվում եմ, որ Նրանք մի ամբողջ տարի իրանց գործերը թողած քաղաքի համար գործ կատարեցին, չարչարվեցան, իսկ մենք վառարանի առաջ Նստած մեր քէֆին էինք առաջ տանում: Եւ մեր հաստակութիւնը առանձին յարգանքով պէտք է վերաբերվի Նրանց, որովհետև սով ժամանակը մատամբ ապահովացրին մեզ: Եւ

կոմիտեի անդամների պարտաւորութիւնն է հաստակացնել, ցոյց տալ մեզ իրանց արածները, որ մենք էլ մեր պարտքը ճանաչելով, կարողանանք նրա համեմատ յարգանքը տալ: Գործը մթութեան մէջ պահելով, ինչու՞ իւր կատարածը յարուցանել Կոմիտեի անդամները իրանց են վրդովվում և սրան Նրան մեղադրում. Ովոր ստացել է փողեր, հաստատութեան համար գործ է կատարել (շատ հնարկալ ենք), պէտք է տայ իր գործունէութեան հաշիւը, այնպէս, ինչպէս ամեն մարդ սովոր է տանում իր գործակատարներից:

Այս տեղում ես չը կամենալով խոսմունքս կատարել, բաւական եմ միայն կոմիտեի անդամների անունները յայտնելով, հաստատելով, որ նրանք այնքան բարի կը լինեն, որ գոնէ այս անգամ հաշիւը կը հրատարակեն, իսկ հաստատակ դէպքում, ես տարվված, կը ներպարդեմ տեսածներս և լսածներս, մի խօսքով բոլորը:

Մի քանի խօսք էլ մեր պատուելի հաստակոմիտեին. բաւական է տրված ինձ՝ նա անտարբերվելու և անհոգութեան քնով. չէ որ քունը մեռելութեան նշան է. պէտք է վերջապէս արթնանալ, աչք բաց անել և իր շրջիկը նայել, քննել և տեսնել թէ ինչեր են կատարվում: Քաղաքի համար խմելու ջուր կը բերեն, հաստատութիւնը անտարբեր մնալով, թողնում է մի քանի պարոնների կամքին: Երեցփոխանները են ընտրում և հաստատութեան անտարբերութեան շնորհիւ գերեզմանատները վառում, իսկ նա չէ հետաքրքրվում. Դեհարատաներ են ընտրում, նրանց ամեն պահանջները կատարում են, բայց երբէք չեն կամենում հետաքրքրվել նրանց գործունէութիւնով: Հայի թաղամասի ժամանակը քաղաքի աղքատներին օգնելու նպատակով առանց նեղութիւնների է անում հաստատութիւնը, բայց էլ ՏարցնումՏ նչ է ա՝ աւելորդ գուսարը, բոլոր փողերը իրանց նպատակին ծառայեց թէ...

Այսպէս կոմիտեի անդամների անունները՝ Ցակոբ Լիսիկեանց, և Հայի Մամմատ Սոյան Ալի օղլի (գանձապահներ), Գեղամ Մարգարեան, Սարգիս Ախնազարեանց, Արշակ մաշտ. Յովսէփեանց և Սողոմոն Դալչակարեանց (ցորեն առնողներ) մ. Յովհաննէս Վարդապետեանց, մ. Գերոմիր Ծ. Մարտիրոսեանց, Գրիգոր Փանոսեանց և Բաղի Նուխեանց (ցորեն ամբարից վանահարներ), իսկ թուքերի անուններով որքան հետաքրքրվեցայ չը կա-

---

հանում՝ երբ նիւթին յանձնում էին: Նստած էինք բազմոցներու՝ սեղանի վրա, որոնք երկու՝ կամ երկու և կէս կանգուն լայնութեամբ, և յատակէն մէկ կանգուն բարձրութեամբ, սենեակի մէկ գրլխէն և երկու կողմանէ, պատերու տակէն իրար զուգահեռական՝ գետնի են մինչև միւս գլուխը՝ մինչև անկուն մուտքի բերանը, ճիշտ մէջտեղը մոտ կանգուն ու կէս լայնութեամբ մի անցք թողնելով որի վերի գլուխը վառարանն է, և ներքինը՝ մուտքը: Դուռն կողմի պատը մարդաչափ միայն շարուած էր, և նա էլ երկու կողմանէ տախտակ էր ձեւացնում, կամ, ինչպէս ասացի, բազմոցներ՝ միւսներէն աւելի բարձր. նաև երրորդ պատը, յատկապէս դռա կողմինը, կէսը միայն մինչև վեր շարուած էր, միւս կէսը դարձեալ մարդաչափ, դարձեալ բազմոցով էր, թիկունքի կողմանէ տախտակ քաշուած՝ իբրև ճաղ, որին կարող է դէմ անել իր կռնակը՝ նստողը, կամ կողքի նստած ժամանակ թեր վրէն դնել իրրն ինարան: Այդպէս շինուած, դռան մուտքը և դռան տանուտիրող աչքի առջևն է, և անասունների գոլ շնչովը անարգել տաքանում է նաև սենեակը: Մուտքն ընկել էր. սենեակի երդիքը կանգնել էին, և պատնէական ճրագը կրակարանի վերևը աշտանակի կամ այլազգաբար խոսելով՝ ճախի դաշի վրա դրուած, այնքան բարձրութեամբ որ մի աշտասակ մի մարդ ձեռքը դէպի վեր երկնչելով հաշիւ հանում է, իր կարմրաժեռլուսով կառում էր խաւարն հետ և իր մտորը բաւական լոյս, որով սակայն կրակարանի մոտ նստած մարդն էլ գժուարութեամբ է ջոկում զրրքի տառերը, իսկ հեռուները մի աղամաղդ էր գոյացնում. Այդ լուսամիտի մէջ, իրենց սիրի և ասոտիանի կարգովը բազմած էին երեկոյան խոսակցութեան համար ժողովուած քրդերը. պատուական թաղիքներու՝ քէչաներու վրա, որոնք յատկապէս նոյն բազմոցներու համար թափված լինելով նոցա մէկ գլխէն մինչև միւսը երկայնվում էին կոտատի ձէնձանի ջաղեանի վրա, որով նախ թաղիքը անվնաս պահպանվում է հաղի ազդեցութենէն, և երկրորդ՝ նիստը կակուղ է լինում. դռան վրա բազմած էին ասում եմ, ումն ասները տակը ծալած՝ տարեկ նստած, ումն մէկը միայն ծալած և միւսը առաջինի կողքին ուղղաչայաց գնտեղած և թեները մերթ այս ձեւով մերթ այն ձեւով ծեկի

վրա յեցուցած. ումն չոգած, պլլ ումն՝ եթէ ալեոր էր մանաւանդ և պատուաւոր՝ վերի կողմերում բարձի վրա թեք ընկած և ասնները կէս պարզած, ոմանք առաջով նստած այնպէս ինչպէս մենք ենք նստում աթոռի վրա, մի խօսքով ամենքն հանգիստ իրենց ասոիանների և յարմարութեանը նրստած էին այն Մարերը, Ագռաչաղի թոռները, Հայոստանի Վիշապազանց ազգ մնացորդները, որոնց երբեմն Արզամ էր հրամայում Հայոց դրօշակի տակ՝ օրինաւոր ժառանգի դառը պաշտպանելու համար, իսկ այսօր մի Մուտաֆա կամ մի Աշչիա առաջնորդում է յեղուզարդիութիւն անելու, արիւն խմելու, սրբութիւններ պղծելու, բռնաբարներ պաշտպանելու համար: Դա մի ակումբ էր, կամ եթէ կուզես եւրոպանոլով ասում մի քլուբ էր՝ կլուբ էր՝ ինչպէս կախարժեա, որ ամեն երեկոյ տեղի ունի մեր Երկրում գիւղի առաջաւորներու սենեակներում՝ ձմեռ ժամանակ: Խօսում էին նոքա ընական է քրդերէն. քաղաքակրթուած կամ այնքան սարուկ չէին, այն քաղաքի պէս՝ որ այս ա՝ ռաւօտ նստներս թողնէք, որ չը գիտենայիս իրենց լեզուն՝ կամ արշամարէին. միա՝ն երբեմն մարգարտիներամբ փոխում ու թուրքերէն էին խօսում. իրեն հիւրերու հետ՝ այլ և այլ հարցուփորձեր անելով: Այդ ազատ մարդիկը կրքով սիրում են իրենց նիզակն ու իրենց ձին, և արգարև վիշապ ու վիշապազն են նոքա այն նժոյգ, օդապարիկ երիւարներու վրա, իրենք ոտից ցցուելս կարմիր հագած, վահանիկները կարմիր, նիզակի գլուխ փունջն էլ երբեմն կարմիր, իրենց թաղեայ գլխանոցի վրա կարմիրը կանանչի հետ փաթաթուած. արծրուանդն, աչքերը կրակոտ, յոնքերը խիտ ու կամարապատ, ընչացքները թանձր, և եթէ՝ գլուխ են՝ սպիտակ մօրուքները կոտրձերուն վրա ալեծածան փռուած. արդարև գեղեցիկ ձիաւորներ: Այդպէս մարդիկ, որ թուրը մէջքերումն ունին և բուռը դաստակի վրա, սոսկալ և անպատանալ չը գիտեն:

«Գիրքն արդէն յատաջացել էր. շները բարձր տանիքներու վրա պրպտած՝ ասղերն ի վեր հաչում ու տխուր ձայնով ոռնում էին. ժողովականներն սկսան մէկ մէկ քաշափ, աւելի ընտանիներն և կարևորներն ամենէն ուշ մնացին. երբ սոքա էլ հագան իրենց կարմիր ռանամանները՝ ջիմէներն,

և վրէներն ապատերն այն իրենց քրտնակ վերարկուներն առած գնացին, նկաւ իրիկնացը. գրին կրակարանի առջև սեղանը խնչան, շարունին վրէն բոլորի քրդի հատ լաւաշը. բոլորուեցանք շուրջը երեք հիւր, տանուտէրը՝ մի պատկառելի ծերուի, և էլ չը գիտեմ ով. նոքա մեծարեցին մեզ իրենց մասանի բարիքէն, ձուն խաշած թէ ձուածեղ մյուս չէ, կարագը և մածունը ուռփով որ մեղր չեղած ժամանակ նոքա տեղն է բռնում, և լոքը կամ ժաղիկը. մենք մեր ճանապարհի պարէնէն հանեցինք նոցա համար հայ գաթան. անապակ ջուրն էր մեր գինին, որ լոքի վրա մանաւանդ իրատ շատ կարևոր է:

«Մի և նոյն սենեակում ձգին մեզ համար տեղ մաքուր անկողին, վերմակի վրա նաև քրդիզրդի կապերտը. չը մոռացան նաև մաշրապայով ջուր մտերս դնել: Առաւօտուն բարիլաւս հետ զարթնեցաք, որ սենեակի բաց լուն երդէն ներս էր մտել. աչքերս բացի թէ չէ պատկառելի ծերունին տեսայ, որ վերի բազմոցի վրա նստած իր Աստուծուն երկրպագութիւնն էր անում: Մինչ մեր ադեաստուներուն ջուր ու գարի էին տալիս, և դեռ վիզնց կար մինչև ճանապարհ ընկնելը, մոքս հետ գնացինք տուն. կին և աղջիկ պատեցին մեզ սիրով ու հետաքրքրութեամբ. հարցնում էին հայ կրնոքը, տեղեկանում էին, քանիներ էին ուզում սովորել. նորա ծերուին զոմնոցն շատ հաճելով հարցնում էին թէ ինչպէս պէտք էր թելը այնպէս սիրուն ծիրանի ներկել. հարցնում էին թէ ինչպէս պէտք էր թելի պանիր շինել, որ տեսել էին մեր հետ, և այն զոմնպիսի տարաբերութեան բաներ: Ճշմարիտ, այդ բնութեան զաւակներու երեսի վրա և աչքի մէջ այնպէս խաղում ու նշոլլտկում էին ուրախութիւնն ու սէրը որ զգում էին մեր իրենց մէջ ներկայութիւնէն, որ երբէք մոռացել չեմ ու չեմ մոռանալ:

Երկայնաբանութեանս երևսէն՝ գուցէ մտէչան արի սկզբում ասածս, թէ գիտմամբ էինք ինչել ալալ տունը: Այո՝ գիտմամբ էինք ինչել, որովհետև իր պաշտպանութեանը կարող էինք: Ճանապարհն ամենամանգաւոր տեղը, ուր ուղևորի պէտք որոնում է ապաւ ոլով և եղերը հայվում են, այդ գիւղի սահմանումն է և մեր գնալիք կազմի վրա: Իր տան մէջ այնքան օտարասէր քուրդը,

բաց դաշտում անծանօթ մարդու Աշուզարն է: Ազան հանելու իր մարդիկներէն մէկը գրեց, որ երկիր ղազի անցքէն մեզ ապահովեն հանեմ: Ճանապարհ այդ մէկ ելնելն տերիք էր ամեն ձիաոր խմել մեզ անվնաս պահելու: Մի ուրիշ տեղ ալ քամանատեսաց քրդի առազակութեան չափը: Կարդ էս, նստած էինք հայի. ներս մտաւ քուրդ և համբարձ եմ, հայ ուղեց. մէկ լաւաշ տուին. գոյ ցեղաւ լամանը, քրդարդին, հաստատ սեղանի վրայն բոլոր լաւաշները արեց՝ տարաւ, և հայը չը համարձակեցաւ ձայն հանելու:»

—Դարաւ էլ են մեր ցեղը.—ասացի Նորան:

—Այո՝, բայց դարաւ կարող են մեր եղբայրները լինել, եթէ մենք յօժարութեամբ և եռանդով մեզ զարկենք եղբայրցնելու արուեստին: Ես նոցա մեզ ընդունելութիւնը մեծարանքի, ենամանութեան ասն այն գոգարիկ դաշի ուրախութեան ու սիրոյ մէջ որ ասացի քեզ, այսօրուայ աչքովս տեսնում եմ մի ազնիւ բնութեան ծիր, նոցա տան վայելչութեան և իրենց հետաքրքրութեան մէջ յաճախի մոտիան համար թեղինարի լինելու տերմանք. և թէ մի բարերար անձրև և մի ջերմիկ արև գան իջնեն նոցա վրայ: Բայց եթէ առ այժմ չունենք մեզ հետ եղբայրացնելու կարողութիւնը. գէթ նոցա ասնելու համար յաւելացնենք մեր այլ յատկութեանց վրա նաև այն, նիզակով խորտակվեց նոցա նիզակը: Նորա որսական արձիներ են, իրենց բոլոր շատ անգամ ծարի մէջ է, իրենց բերը միշտ ասարի վրա սրուած. Իրենք մեզ ասի վրա սայասուր նեներու կապարը: Այդ կարիճները չեն ուզեցել մի անկարգ և քանանարութեան ենթարկիլ, ասուի սիրել ինչ մայրերու ապատութիւնը. չեն ուզեցել իրենց կապը փոշանելու ձեռքը տալ, ասան թարի իրենց մէջքէն միշտ կախ են պահել: Բայց էնչ պէտք է անմիտ և անիրաւ փոշի յանգնիլ Հայը տուժէ: Ամենիսի անկարգ և վայրենի գրութեան մէջ եղել գրեղ կախեմ ասեն անցնող կը զարկէ:

(Կը շարունակվի)